ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հաստատված է ամբիոնի նիստում**
Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Վ. Վ. Հարությունյան/Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 1

«28» օգոստոսի 2023թ.

**ԷԻԿ/մ-040, Կրթության բնագավառի օրենսդրություն**
Դասիչ, դասընթացի անվանում

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

**Մասնագիտություն՝** **011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն**
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** **011401.19.7 Հայոց լեզու և գրականություն**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** **Մանկավարժության մագիստրոս**
/բակալավր, մագիստրատուրա/

**Ամբիոն՝** **Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման**
/ /ամբիոնի լրիվ անվանումը/

**Ուսուցման ձևը՝** **առկա**
/առկա, հեռակա/

**Կուրս/կիսամյակ** առկա **1-ին կուրս, 1-ին կիսամյակ**

**Դասախոս(ներ) ՝** Գ. Տիգրանյան
/անուն, ազգանուն/

էլ հասցե/ներ gnel-t@mail.ru

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում ……………………… 3
2. Դասընթացի նպատակը և խնդիրները …………………………… 3
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները …………………………… 4
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները ………………………… ..
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների ………………………………… …
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը ………………………………… …
7. Ուսումնական աշխատանքները տեսակները ………………………… ..
8. Դասավանդման մեթոդներ………………………………… ..
9. Ուսումնառության մեթոդները …………………………………… ..
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը ..
11. 0. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ……………
12. 1. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ………………………… ..
    - 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ……………… ..
    - 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ…………………………… …
    - 12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ………. ..
    - 12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ ………. ..
13. 2. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում……………… ..
14. 3. Գնահատում…………………………………………………… ..
    - 14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում……………………………. ..
    - 14.2. Հարցաշար……………………………………………… ..
    - 14.3. Գնահատման չափանիշներ………………………………… ..
15. 4. Դասընթացի համառոտ նկարագրիչ……………………………… …

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. **Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում.**

**«Կրթության բնագավառի օրենսդրություն»** դասընթացը կարևորվում է «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է **011401.00.7** կրթական ծրագրի ուսումնական պլանում:

Բուհում առարկայի դասավանդումը հնարավորություն կտա մագիստրոսներին ստանալ այնպիսի գիտելիքներ, հմտություններ, որոնք նրանց կօգնեն իրենց մասնագիտական կարողությունները կանոնակարգելու և գործնականում կիրառելու համար:

Առարկայի ուսումնասիրությունը հնարավորություն կտա կատարել ընդհանրացումներ ինչպես իրավունքի տվյալ բնագավառի առանձին հարցերի, այնպես էլ ՀՀ իրավունքի միասնական համակարգում կրթության իրավունքի տեղի և դերի վերաբերյալ: Միաժամանակ ուսանողը շփվում է սահմանադրական, վարչական, քաղաքացիական ու երեխայի իրավունքների հետ, ինչի արդյունքում նրա մոտ ձևավորվում է իրավական իրականության վերաբերյալ ընդհանրական գիտելիքներից եզրահանգումներ կատարելու հմտություններ ու կարողություններ:

2. **Դասընթացի նպատակը և խնդիրները.**

**2.1.** Դասընթացի նպատակն է տալ համապատասխան գիտելիքներ, ձևարել ու զարգացնել հմտություններ և կարողություններ կրթության իրավունքի և օրենսդրության տեսականմեթոդական ժամանակակից խնդիրների, կրթության քաղաքականության և ռազմավարության իրականացման վերաբերյալ, ինչը կնպաստի ընդհանուր կրթական համակարգի և հատկապես հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտների արդյունավետ կառավարմանը, կշաղկապի վերջին երկու օղակները:

Առանձին լուսաբանվում են նաև անցումային հասարակարգերի կրթական համակարգի խնդիրները և դրանց լուծման ռազմավարությունն ու այդ համատեքստում՝ ՀՀ կրթական օրենսդրության բարեփոխումների արդյունավետությունը:

**2.2. Դասընթացի խնդիրներն են.**

- Ուսանողներին զինել գիտելիքներով Կրթության իրավունքի և նրա խնդիրների մասին:

-Ուսանողներին գաղափար տալ Կրթության իրավունքի և օրենսդրության էության, կրթական համակարգում նրա տեղի ու դերի, օրինաչափությունների և առանձնահատկությունների մասին:

-Խորացնել և ընդլայնել ուսանողների իրավաբանական ընդհանուր տեսականն մեթոդական խնդիրները:

-Օգնել ուսանողներին՝ տեսական գիտելիքներն օգտագործել գործնականում:

-Հիմք ստեղծել իրավագիտական մյուս առարկաների (սահմանադրական իրավունք, վարչական իրավունք, քաղաքացիական իրավունք և այլն) հետագա ուսումնառության համար:

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/**

**«Կրթության կառավարման օրենսդրական հիմունքներ»** դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների գիտելիքների, հմտությունների առկայությունը կրթության կազմակերպման և ղեկավարման ոլորտի, ինչպես նաև իրավագիտություն և քաղաքագիտություն առարկաներից:

**4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[1] և /կամ կոմպետենցիաները.**

**«Կրթության կառավարման օրենսդրական հիմունքներ»** դասընթացի ուսումնասիրման արդյունքում արդյունքում ուսանողը ձեռք կբերի.

Գիտելիք

- Կրթական օրոնսդրության իրացման մեխանիզմների և ռազմավարության վերաբերյալ,
- Ուսումնական հաստատությունների կառավարման օրենսդրության վերաբերյալ,

Ուսումնական հաստատությունների կազմակերպական-իրավական ձևերի, դրանց նմանությունների ու տարբերությունների վերաբերյալ,

Կարողություն

- Գործնականում կիրառել ուսումնական գործընթացի կառավարման արդի սկզբունքները,
- Հանրակրթության գործընթացի կարիքները բացահայտելու համար իրացնել ձեռք բերած գիտելիքները,
- Կազմակերպել ուսումնական հաստատության գործունեության օրենքով սահմանված վերահսկողություն,

Իրականացնել ուսումնական հաստատության գործունեության գնահատում,

Հմտություններ

- Վերհանել ու վերլուծել հանրակրթական հաստատությունների կառավարման ժամանակակից մոտեցումները:
- Դասընթացի ընթացքում ստացած գիտելիքները կիրառել ուսումնական հաստատության հետագա կառավարման ու ղեկավարման գործընթացում:

**Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.**

<u>**Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ**</u>

**Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝**

**ԳԿ1** վերլուծելու և սինթեզելու ունակություն,
**ԳԿ2** կազմակերպելու և պլանավորելու ունակություն,
**ԳԿ3** հենքային և ընդհանուր գիտելիքներ,
**ԳԿ4** մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
**ԳԿ8** տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն),
**ԳԿ9** խնդիրների լուծում,
**ԳԿ10** որոշումների ընդունում:

**Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝**

**ՀԳԿ2** հետազոտություններ կատարելու ունակություններ,
**ՀԳԿ4** նոր իրավիճակներին հարմարվելու ունակություն,
**ՀԳԿ5** նոր գաղափարներ առաջ քաշելու (ստեղծագործելու) ունակություն,
**ՀԳԿ6** առաջնորդի հատկություններ,
**ՀԳԿ9** նախագծեր մշակելու և դրանք կառավարելու ունակություն:

**Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)**

**ԱԿ2** հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
**ԱԿ3** համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը,
**ԱԿ4** ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
**ԱԿ5** հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների մեթոդները,
**ԱԿ6** կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
**ԱԿ7** ցուցաբերել ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի իմացություն,
**ԱԿ8** հասկանալ գիտական տեսությունների ստուգման փորձարարական միջոցների արդյունքերը:
**ԱԿ9** դրսևորել ժամանակակից գիտելիքներ մասնագիտական ոլորտում (կառավարման տեսությունների, ոճերի, դրանց մեկնաբանությունների, մեթոդների և եղանակների իմացություն),
**ԱԿ10** տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,
**ԱԿ11** ցուցաբերեն ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս,

5. **Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների.**

**«Կրթության կառավարման օրենսդրական հիմունքներ»** դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել կրթության կառավարման բնագավառում մասնագիտական գործունեության ընթացքում, կրթության կառավարման մարմիններում աշխատելու, նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և այդ բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարություն (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | 2 կրեդիտ/60ժամ | |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ | ժամաքանակ |
|---|---|---|
| Դասախոսություն | 12 | |
| Գործնական աշխատանք | 12 | |
| Սեմինար պարապմունք | | |
| Լաբորատոր աշխատանք | | |
| Ինքնուրույն աշխատանք | 36 | |
| **Ընդամենը** | 60 | |
| Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | ստուգարք | |

7. Ուսումնական աշխատանքների տեսակները.

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և

ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[2]՝

- **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
- **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
- **Նախագծերի մեթոդ** – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
- **Հարցի նախապատրաստման մոդել** –կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
- **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- **Աշխատանքային տետր** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- **Հարցազրույց** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

---

8. **Դասավանդման մեթոդներներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր.

9. **Ուսումնառության մեթոդներն են՝** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում.

10. **Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների.**

| հ/հ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | ինքնուրույն աշխատանք |
| 1. | Դասընթացի առարկան, մեթոդներն ու գործառույթները: Կրթության իրավունքի աղբյուրները | 2 | | 2 | | |
| 2. | Կրթաիրավական հարաբերություններ, սուբյեկտները | 2 | | 2 | | |
| 3. | Հանրակրթության կառավարման գործընթացի մասնակիցները | 2 | | 2 | | |
| 4. | Հանրակրթության կառավարման մարմինները և դրանց իրավասությունները | 2 | | 2 | | |
| 5. | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության իրավունքը | 2 | | 2 | | |
| 6. | Կրթական մասնակիցների աշխատանքային հարաբերությունները | 2 | | 2 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 12 | | 12 | | |

11. **Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ**

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| Պարտադիր գրականություն (ՊԳ) | | |

| | | |
|---|---|---|
| 1. | Կրթական իրավունք, Եսայան Ա., Երևան, | 2011 |
| 2. | Աշխատանքի և կրթության իրավունք, Դիլոյան Ա., Երևան, | 2002 |
| 3. | Կրթությունը Հայաստանում, Հարությունյան Կ., Դավթյան Ն., Երևան, | 2008 |
| 4. | Հայաստանի կառավարություն, ՅՈՒՆԻՍԵՖ, Երևան, | 2002 |
| 5. | Հանրակրթության պետական կրթակարգ, Երևան, | 2014 |
| 6. | Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, | 2016 |
| **Լրացուցիչ գրականություն(ԼԳ)** | | |
| 1. | Միջնակարգ կրթությունը Հայաստանում, խնդիրներ և հեռանկարներ, Երևան, | 2014 |
| 2. | Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Երևան, | 2017 |
| 3. | Կրթության մասին ՀՀ օրենք (ընդունված է 1999թ. ապրիլի 14-ին), Երևան, | 1999 |
| 4. | Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենք (ընդունված է 2005թ. նոյեմբերի 15-ին), Երևան, | 2005 |
| 5. | Հանրակրթության մասին ՀՀ օրենք (ընդունված է 2009թ. հուլիսի 10-ին), Երևան, | 2009 |
| 6. | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին ՀՀ օրենք (ընդունված է 2005թ. մայիսի 25-ին), Երևան, | 2005 |
| 7. | Կրթության պետական տեսչության մասին ՀՀ օրենք (ընդունված է 2005թ. նոյեմբերի 15-ին) , Երևան, | 2005 |
| **Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)** | | |
| 1. | | |
| 2. | | |

**12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ**

**12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ**

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Գրականություն |
|---|---|---|---|---|
| 1. | Դասընթացի առարկան, մեթոդներն ու գործառույթները: Կրթության իրավունքի աղբյուրները | Կրթության իրավունքի հասկացությունը և առանձնահատկությունները, սկզբունքներն ու մեթոդները, կրթության իրավունքի գործառույթներն ու համակարգը: | 2 | ՊԳ 1, ՊԳ 3, ԼԳ 1, |
| 2. | Կրթաիրավական հարաբերություններ, սուբյեկտները | Կրթության իրավունքի աղբյուրների տեսակ–ները, օրենքները որպես կրթության իրավունքի աղբյուրներ և | 2 | ՊԳ 1, ՊԳ 3, ՊԳ 4, ԼԳ 2, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ենթաօրենսդրական ակտերը որպես կրթության իրավունքի աղբյուրներ: | | |
| 3. | Հանրակրթության կառավարման գործընթացի մասնակիցները | Կրթաիրավական հարաբերությունների հասկացությունը, սուբյեկտներն ու օբյեկտը, բովանդակությունը, ծագման և դադարման հիմքերը: | 2 | ՊԳ 1, ՊԳ 2,<br>ԼԳ 1, ԼԳ 2, |
| 4. | Հանրակրթության կառավարման մարմինները և դրանց իրավասությունները | Նախադպրոցական կրթության համակարգը, հաստատությունների կարգավիճակներն ու լիազորությունները, բնագավառի սուբյեկտները և նախադպրոցական հաստատությունների ֆինանսա-տնտեսական գործունեությունը ու նյութատեխնիկական բազան: | 2 | ՊԳ 2, ՊԳ 3,<br>ԼԳ 2, ԼԳ 4,<br>ԼԳ 5, ԼԳ 6, |
| 5. | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության իրավունքը | Կրթության փաստացի արդյունքի գնահատման կառուցակարգերը, շրջանավարտների հմտությունների ապահովման մեխանիզմները, դասավանդման խնդիրները հանրակրթության բնագավառում: | 2 | ՊԳ 3, ՊԳ 4,<br>ԼԳ1, ԼԳ 2, |
| 6. | Կրթական մասնակիցների աշխատանքային հարաբերությունները | Ուսուցիչներին աշխատանքի ընդունելու կարգը, սկսնակ ուսուցիչների նկատմամբ վարվող քաղաքականությունը, դասագրքերի ստեղծման ու վարձակալության կարգը, ուսումնական ծանրաբեռնվածությունն ու դասարանների խտությունը: | 2 | ՊԳ 2, ՊԳ 3,<br>ԼԳ 2, ԼԳ 4,<br>ԼԳ 5, ԼԳ 6, |

12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն[3] |
|---|---|---|---|---|---|
| 1. | Դասընթացի առարկան, մեթոդներն ու գործառույթները: Կրթության իրավունքի աղբյուրները | Ծանոթացնել կրթության իրավունքի առարկայի, հասկացության օբյեկտիվ և սուբյեկտիվ ընկալումների, առանձնահատկություններ ի, մեթոդների ու գործառույթների հետ Կրթության իրավունքի հասկացությունը և առանձնահատկություններ ը, սկզբունքներն ու մեթոդները, կրթության իրավունքի գործառույթներն ու համակարգը: | 2 | | ՊԳ 1, ՊԳ 3, ԼԳ 1, |
| 2. | Կրթության իրավունքի աղբյուրները | Ներկայացնել աղբյուրների տեսակները՝ միջազգային պայմանագրերը, օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը: | 2 | | ՊԳ 1, ՊԳ 3, ՊԳ 4, ԼԳ 2, |
| 3. | Հանրակրթության կառավարման գործընթացի մասնակիցները | Ներկայացնել կրթաիրավական հարաբերությունների հասկացությունը, քննարկել տարրերը և վեր հանել բովանդակությունը: | 2 | | ՊԳ 1, ՊԳ 2, ԼԳ 1, ԼԳ 2, |
| 4. | Հանրակրթության կառավարման մարմինները և դրանց | Ներկայացնել նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենսդրության հիմքերը, | 2 | | ՊԳ 2, ՊԳ 3, ԼԳ 2, ԼԳ 4, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | իրավասություններ ը | այդ կրթության համակարգը, նախադպրոցական հաստատությունների տեսակները ու բնազավառի կառավարումը: | | | ԼԳ 5, ԼԳ 6, |
| 5. | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության իրավունքը | Ներկայացնել կրթության փաստացի արդյունքի գնահատման ձևերն ու իրավական կառուցակարգերը, դասավանդման խնդիրներն ու շրջանավարտների գիտելիքների ապահովման մեխանիզմները: | 2 | | ՊԳ 3, ՊԳ 4,<br>ԼԳ1, ԼԳ 2, |
| 6. | Կրթական մասնակիցների աշխատանքային հարաբերություններ ը | Ներկայացնել մանկավարժական կադրերի հիմնահարցը, մասնագիտական զարգացման հիմնախնդիրները, առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների կազմման կարգը և խրախուսման մեխանիզմները: | 2 | | ՊԳ 2, ՊԳ 3,<br>ԼԳ 2, ԼԳ 4,<br>ԼԳ 5, ԼԳ 6, |

### 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Ուսումնասիրվող հարցեր | Աշխատանքի տեսակը | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն |
|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Միջազգային պայմանագրերը որպես կրթության քաղաքականության և ռազմավարության աղբյուրներ: | Ներկայացնել միջազգային պայմանագրերը, դրանցից բխող օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը որպես կրթական քաղաքականության ոլորտի հիմնական նորմատիվ հիմքեր: | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | | ՊԳ 3, ՊԳ 4, ԼԳ1, ԼԳ 2, |
| 2. | ՀՀ սահմանադրությունը որպես կրթության քաղաքականության ուղենիշ: | Վերլուծել սահմանադրաիրավական նորմերը, հիմնավորել կրթական քաղաքականության մեջ վերջինիս դերն ու նշանակությունը: | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | | ՊԳ 2, ՊԳ 3, ԼԳ 2, ԼԳ 4, ԼԳ 5, ԼԳ 6, |
| 3. | Ոչ պետական դպրոցների կարգավիճակը ՀՀ-ում: | Քննարկել ոչ պետական դպրոցների կազմակերպաիրավական ձևերը, դերն ու նշանակությունը կիթական բարեփոխումներում: | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | | ՊԳ 1, ՊԳ 3, ՊԳ 4, ԼԳ 2, |
| 4. | Ներառական կրթությունը ՀՀ-ում: | Քննարկել Ներառական կրթությունը անրաժեշտությունն ու կարևորությունը ՀՀ-ում: | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | | ՊԳ 1, ՊԳ 3, ՊԳ 4, ԼԳ 6, ԼԳ 7, |

**13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում**

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|

| | |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | Լսարան |
| Նյութեր լաբորատոր աշխատանքների համար | |
| Սարքեր, սարքավորումներ | |
| Համակարգչային ծրագրեր | |
| Այլ | Մասնագիտական գրականություն |

**14. Գնահատում**

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[4]:

**14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝**

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,

  Դասընթացի ընթացքում ուսանողը հարցվելու է 2 անգամ՝ յուրաքանչյուրը մինչև 10 միավոր:
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,

  Ուսանողը դասընթացի ընթացքում ներկայացնելու է 1 ինքնուրույն աշխատանք:
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,

  Երկու բանավոր ստուգում՝ յուրաքանչյուրը մինչև 20 միավոր:

---

[4]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր։

**14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.**

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով։

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի 2 քննության միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:[5]

**14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)**

1. Կրթության իրավունքի առարկան
2. Կրթության իրավունքի երաշխիքները
3. Կրթության իրավունք հասկացության օբյեկտիվ և սուբյեկտիվ ընկալումները
4. Կրթության իրավունքի առանձնահատկություններն ու բնորոշումը
5. Կրթության իրավունքի մեթոդները
6. Կրթության իրավունքի գործառույթները
7. Կրթության իրավունքի աղբյուրների դասակարգումը
8. ՀՀ Սահմանադրությունը որպես կրթության իրավունքի աղբյուր
9. Միջազգային պայմանագրերը որպես կրթության իրավունքի աղբյուրներ
10. Կրթության բնագավառում ազգային փոքրամասնությունների իրավունքները
11. Օտարերկրացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց կրթության իրավունքը
12. ՀՀ և այլ պետությունների միջև կնքված կրթության բնագավառի համագործակցության պայմանագրերը
13. Օրենքները որպես կրթության իրավունքի աղբյուրներ
14. Ենթաօրենսդրական ակտերը որպես կրթության իրավունքի աղբյուրներ
15. Կրթաիրավական հարաբերություններ հասկացությունը
16. Կրթաիրավական հարաբերությունների տարրերը
17. Վերափոխումները նախադպրոցական կրթության համակարգում
18. Նախադպրոցական կրթության պահանջարկի կրճատման պատճառները
19. Նախադպրոցական կրթության այլընտրանքային տարբերակները
20. Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենսդրության հիմքերը
21. Նախադպրոցական կրթության համակարգը
22. Նախադպրոցական հաստատությունների տեսակները, կարգավիճակն ու լիազորությունները
23. Նախադպրոցական կրթության բնագավառի կառավարումը
24. Նախադպրոցական կրթության բնագավառի սուբյեկտները
25. Նախադպրոցական հաստատությունների ֆինանսատնտեսական գործունեությունը և նյութատեխնիկական բազան
26. Կրթության որակ հասկացությունը իրավական ակտերում
27. Կրթության փաստացի արդյունքի գնահատման ձևերը և իրավական կառուցակարգերը

[5] Կիրառվում է կամ առաջին, կամ երկրորդ պարբերությունն ըստ դասընթացի ամփոփման ձևի:

28. Շրջանավարտների գիտելիքների ու հմտությունների ապահովման մեխանիզմները
29. Շարունակականության և սահուն անցման հիմնախնդիրը հանրակրթության գործընթացում
30. Դասավանդման, ուսումնառության և գնահատման խնդիրները հանրակրթության բնագավառում
31. Ներդրվող ռեսուրսները հանրակրթության համակարգում
32. Մանկավարժական կադրերի հիմնահարցը հանրակրթության ոլորտում
33. Ուսուցիչներին աշխատանքի ընդունելու կարգը
34. Սկսնակ ուսուցիչների նկատմամբ վարվող քաղաքականությունը
35. Մանկավարժական կադրերի մասնագիտական զարգացման խնդիրները
36. Առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների կազմման կարգը
37. Դասագրքերի ստեղծման ու վարձակալության կարգը
38. Ուսումնական ծանրաբեռնվածության և դասարանների խտության հիմնահարցերը հանրակրթության ոլորտում
39. Խրախուսման մեխանիզմները հանրակրթության բնագավառում
40. Կրթության ապակենտրոնացումը որպես ղեկավարման հիմնական խնդիր
41. Կրթության կառավարումը հանրապետական ու տարածքային մակարդակներում
42. Ոչ պետական դպրոցների կարգավիճակը ՀՀ-ում
43. Կրթության քաղաքականության հետազոտությունների ու ներդրումների կապը
44. Կառավարումը կրթական հաստատության աստիճանում
45. Հանրակրթական հաստատությունների սովորողների իրավունքներն ու պարտականությունները
46. Աշակերտների ծնողների իրավունքներն ու պարտականությունները
47. Հանրակրթական հաստատության տնօրենի ընտրության կարգն ու իրավասությունները
48. Մանկավարժական աշխատողները, նրանց ատեստավորման պարզ ընթացակարգը
49. Մանկավարժական աշխատողների ատեստավորման բարդ ընթացակարգը
50. Մանկավարժների իրավունքներն ու պարտականությունները
51. Հանրակրթական հաստատության գործունեության տնտեսական հիմքերը
52. Հատուկ կրթական համակարգի բարեփոխումները ՀՀ-ում
53. Հատուկ կրթության նպատակները և հիմնարար դրույթները
54. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց բժշկահոգեբանամանկավարժական գնահատաման կարգը
55. Ներառական կրթությունը ՀՀ-ում
56. Կրթության պետական տեսչության նպատակները, խնդիրներն ու լիազորությունները
57. Կրթության պետական տեսչության կառուցվածքը
58. Կրթության պետական տեսչության տեսուչների իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը
59. Կրթության բնագավառում պետական տեսչավորման գործընթացի իրականացման կարգը

<u>Ա) (1-ին ընթացիկ ստուգում (կիսամյակի 9-10 շաբաթվա ընթացքում)</u>

- **Ընդգրկված թեմաները.**

1. Դասընթացի առարկան, մեթոդներն ու գործառույթները
2. Կրթության իրավունքի աղբյուրները
3. Կրթաիրավական հարաբերություններ, սուբյեկտները
4. Նախադպրոցական կրթության իրավունքը
5. Կրթության որակ հասկացությունը իրավական ակտերում

- **Ընդգրկված հարցեր.**

1. Կրթության իրավունքի առարկան

2. Կրթության իրավունքի երաշխիքները
3. Կրթության իրավունք հասկացության օբյեկտիվ և սուբյեկտիվ ընկալումները
4. Կրթության իրավունքի առանձնահատկություններն ու բնորոշումը
5. Կրթության իրավունքի մեթոդները
6. Կրթության իրավունքի գործառույթները
7. Կրթության իրավունքի աղբյուրների դասակարգումը
8. ՀՀ Սահմանադրությունը որպես կրթության իրավունքի աղբյուր
9. Միջազգային պայմանագրերը որպես կրթության իրավունքի աղբյուրներ
10. Կրթության բնագավառում ազգային փոքրամասնությունների իրավունքները
11. Օտարերկրացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց կրթության իրավունքը
12. ՀՀ և այլ պետությունների միջև կնքված կրթության բնագավառի համագործակցության պայմանագրերը
13. Օրենքները որպես կրթության իրավունքի աղբյուրներ
14. Ենթաօրենսդրական ակտերը որպես կրթության իրավունքի աղբյուրներ
15. Կրթաիրավական հարաբերություններ հասկացությունը
16. Կրթաիրավական հարաբերությունների տարրերը
17. Վերափոխումները նախադպրոցական կրթության համակարգում
18. Նախադպրոցական կրթության պահանջարկի կրճատման պատճառները
19. Նախադպրոցական կրթության այլընտրանքային տարբերակները
20. Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենսդրության հիմքերը
21. Նախադպրոցական կրթության համակարգը
22. Նախադպրոցական հաստատությունների տեսակները, կարգավիճակն ու լիազորությունները
23. Նախադպրոցական կրթության բնագավառի կառավարումը
24. Նախադպրոցական կրթության բնագավառի սուբյեկտները
25. Նախադպրոցական հաստատությունների ֆինանսատնտեսական գործունեությունը և նյութատեխնիկական բազան
26. Կրթության որակ հասկացությունը իրավական ակտերում
27. Կրթության փաստացի արդյունքի գնահատման ձևերը և իրավական կառուցակարգերը
28. Շրջանավարտների գիտելիքների ու հմտությունների ապահովման մեխանիզմները
29. Շարունակականության և սահուն անցման հիմնախնդիրը հանրակրթության գործընթացում

<u>Բ) 2-րդ ընթացիկ ստուգում (կիսամյակի19- 20 շաբաթվա ընթացքում</u>

- Ընդգրկվող թեմաները.

1. Ներդրվող ռեսուրսները հանրակրթության համակարգում
2. Հանրակրթության կառավարման մարմինները և դրանց իրավասությունները
3. Հանրակրթության կառավարման գործընթացի մասնակիցները
4. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության իրավունքը
5. Կրթության և առողջապահության պետական տեսչությունը, լիազորությունները

- **Ընդգրկված հարցեր**

30. Դասավանդման, ուսումնառության և գնահատման խնդիրները հանրակրթության բնագավառում
31. Ներդրվող ռեսուրսները հանրակրթության համակարգում
32. Մանկավարժական կադրերի հիմնահարցը հանրակրթության ոլորտում
33. Ուսուցիչներին աշխատանքի ընդունելու կարգը
34. Սկսնակ ուսուցիչների նկատմամբ վարվող քաղաքականությունը

35. Մանկավարժական կադրերի մասնագիտական զարգացման խնդիրները
36. Առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների կազմման կարգը
37. Դասագրքերի ստեղծման ու վարձակալության կարգը
38. Ուսումնական ծանրաբեռնվածության և դասարանների խտության հիմնահարցերը հանրակրթության ոլորտում
39. Խրախուսման մեխանիզմները հանրակրթության բնագավառում
40. Կրթության ապակենտրոնացումը որպես ղեկավարման հիմնական խնդիր
41. Կրթության կառավարումը հանրապետական ու տարածքային մակարդակներում
42. Ոչ պետական դպրոցների կարգավիճակը ՀՀ-ում
43. Կրթության քաղաքականության հետազոտությունների ու ներդրումների կապը
44. Կառավարումը կրթական հաստատության աստիճանում
45. Հանրակրթական հաստատությունների սովորողների իրավունքներն ու պարտականությունները
46. Աշակերտների ծնողների իրավունքներն ու պարտականությունները
47. Հանրակրթական հաստատության տնօրենի ընտրության կարգն ու իրավասությունները
48. Մանկավարժական աշխատողները, նրանց ատեստավորման պարզ ընթացակարգը
49. Մանկավարժական աշխատողների ատեստավորման բարդ ընթացակարգը
50. Մանկավարժների իրավունքներն ու պարտականությունները
51. Հանրակրթական հաստատության գործունեության տնտեսական հիմքերը
52. Հատուկ կրթական համակարգի բարեփոխումները ՀՀ-ում
53. Հատուկ կրթության նպատակները և հիմնարար դրույթները
54. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց բժշկահոգեբանամանկավարժական գնահատաման կարգը
55. Ներառական կրթությունը ՀՀ-ում
56. Կրթության պետական տեսչության նպատակները, խնդիրներն ու լիազորությունները
57. Կրթության պետական տեսչության կառուցվածքը
58. Կրթության պետական տեսչության տեսուչների իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը
59. Կրթության բնագավառում պետական տեսչավորման գործընթացի իրականացման կարգը

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ 011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011401.19.7 Հայոց լեզու և գրականություն

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության մագիստրոս

/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2023

Առկա ուսուցման համակարգ

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">ԷԻԿ/մ-040 - Կրթության բնագավառի օրենսդրություն</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">2 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">1-ին տարի,1-ին կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="6">Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">24</td><td>Դասախոսություն</td><td>12</td></tr>
<tr><td>Սեմինար</td><td></td></tr>
<tr><td>Լաբորատոր աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td>12</td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">36</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">60</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">ստուգարք</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">Տալ համապատասխան գիտելիքներ, ձևաորել ու զարգացնել հմտություններ և կարողություններ կրթության իրավունքի և օրենսդրության տեսականմեթոդական ժամանակակից խնդիրների, կրթության քաղաքականության և ռազմավարության իրականացման վերաբերյալ, ինչը կնպաստի ընդհանուր կրթական համակարգի և հատկապես հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտների արդյունավետ կառավարմանը, կշաղկապի վերջին երկու օղակները:<br>Առանձին լուսաբանվում են նաև անցումային հասարակարգերի կրթական համակարգի խնդիրները և դրանց լուծման ռազմավարությունն ու այդ համատեքստում՝ ՀՀ կրթական օրենսդրության բարեփոխումների արդյունավետությունը:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.<br>Գիտելիք<br>• Կրթական իրավունքի և օրենսդրության իրականացման ռազմավարության վերաբերյալ,<br>• Ուսումնական հաստատությունների  կառավարման օրենսդրության վերաբերյալ,</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | • Ուսումնական հաստատությունների կազմակերպական-իրավական ձևերի, դրանց նմանությունների ու տարբերությունների վերաբերյալ<br>*Հմտություն*<br>• Վերհանել ու վերլուծել հանրակրթական հաստատությունների կառավարման ժամանակակից մոտեցումները:<br>• Դասընթացի ընթացքում ստացած գիտելիքները կիրառել ուսումնական հաստատության հետագա կառավարման ու ղեկավարման գործընթացում:<br>*Կարողունակություն*<br>• Գործնականում կիրառել ուսումնական գործընթացի կառավարման արդի սկզբունքները<br>• Հանրակրթության գործընթացի կարիքները բացահայտելու համար իրացնել ձեռք բերած գիտելիքները<br>• Կազմակերպել ուսումնական հաստատության գործունեության վերահսկողություն |
| **Դասընթացի բովանդակությունը** | Թեմա 1. Դասընթացի առարկան, մեթոդներն ու գործառույթները: Կրթության իրավունքի աղբյուրները<br>Թեմա 2. Կրթաիրավական հարաբերություններ, սուբյեկտները<br>Թեմա 3. Հանրակրթության կառավարման գործընթացի մասնակիցները<br>Թեմա 4. Հանրակրթության կառավարման մարմինները և դրանց իրավասությունները<br>Թեմա 5. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության իրավունքը<br>Թեմա 6. Կրթական մասնակիցների աշխատանքային հարաբերությունները |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները** | ▪ գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,<br>▪ ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,<br>▪ դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ |

| | |
|---|---|
| | առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,<br>▪ ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր: |
| **Գրականություն** | Պարտադիր-<br>Կրթական իրավունք, Եսայան Ա., Երևան, 2011<br>Աշխատանքի և կրթության իրավունք, Դիլոյան Ա., Երևան, 2002<br>Կրթությունը Հայաստանում, Հարությունյան Կ., Դավթյան Ն., Երևան, 2008<br>Հայաստանի կառավարություն, ՅՈՒՆԻՍԵՖ, Երևան,2002<br>Հանրակրթության պետական կրթակարգ, Երևան, 2014<br>Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, 2016<br>Լրացուցիչ-<br>Միջնակարգ կրթությունը Հայաստանում, խնդիրներ և հեռանկարներ, Երևան, 2014<br>Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Երևան, 2017:<br>Կրթության մասին ՀՀ օրենք (ընդունված է 1999թ. ապրիլի 14-ին), Երևան, 1999:<br>Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենք (ընդունված է 2005թ. նոյեմբերի 15-ին), Երևան, 2005:<br>Հանրակրթության մասին ՀՀ օրենք (ընդունված է 2009թ. հուլիսի 10-ին), Երևան, 2009:<br>Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին ՀՀ օրենք (ընդունված է 2005թ. մայիսի 25-ին), Երևան, 2005:<br>Կրթության պետական տեսչության մասին ՀՀ օրենք (ընդունված է 2005թ. նոյեմբերի 15-ին), Երևան, 2005: |